ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2018թվականի N 50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 24.2784 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65 հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 2016 թվականի հունիսի 30-ի որոշման, Հայաստանի Հանրապետության Կառավարության նիստի 2016 թվականի հունիսի 9-ի N22 արձանագրության 27 կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևան-Սևան մայրուղի թիվ 51 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության, 24.2784 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0763-0003) անհատույց սեփականության իրավունքով, որպես նվիրաբերություն, տրամադրել «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը այդ հողամասում, «Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ թափոնների կառավարման» ծրագրի շրջանակներում, աղբավայր կառուցելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված 24.2784 հա մակերեսով հողամասը, որպես նվիրաբերություն, տրամադրել «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնության առկայության դեպքում:
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*